



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4887

294
U-60

1075

2010

170
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒ
ՀԵՐԱՆՈՒ ԿԱՎՊԱՇՏԻՑ

Թարգմանեալ Անգլիականէ

ՀՐԱՏ. Յ. ՔԵՊԱՐԵԱՆ:



8ՊԱԴՐՈՒԹԻՒՆ
Ս. Դ. ՊԱՐՏԵԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

2001

294
1875
U-60

nr. 58

5
Printed in Turkey

ՊԱՏՄ. Տ. ՄՔՈՒՄՏԻ

Խ Վ Ե Ր Ա Յ

Հ Ն Գ Կ Ա Ս Տ Ա Ն Ի

Printed In Turkey

294
U-60

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒ

ՀԵԹԱՆՈՍ ԿՌԱՊԱՇԻՑ

ԹՈՐԳՄԱՆԵԱԼ ԱՆԳԼԻԱԿԱՆԵ

ՀՐԱՏ. Յ. ՔԻՊԱՐԵԱՆԵ



ՊՐՈԽԾԱՅ. ՎԻՃՆՈ ԵՒ ՍԻՎԱ



S. GOLIK

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍՍՄՈՒԵԼ, Դ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԲՆԱԵՐՔ

Գ 875

9761



Printed in Turkey

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՆԴԿԱԾԱՏԵՆՈՒ

→→→Զ●◆◆◆←

ՅՈՒՂԻԱԾ Ա.

Տպագր. Ս. Պ. Պարտիզանեան և ընկ.
Կ. Պօլիս



3395

39

Հնդկաստանու հարաւային արևել
եան կողմը՝ Մատրաս անուն վաճառա-
շահ քաղաք մը կայ, որ հարիւր հա-
ղարէն աւելի բնակիչ ունի իր արուար-
ձաններով մէկտեղ :

Ասոնք կը խօսին թայմըլ ըսուած-
լեզուն, որ շատ տարբեր է մեր լեզ-
ուէն :

Այս քաղաքիս բնակիչները հեթա-
նոս եւ կռապաշտ են, որ կը պաշտեն
ուկիէ, պղնձէ ու քարէ աստուածներ.
նոցա մայրերն ՚ի մանկութենէ կուսու-
ցանեն աղօթել այս ձեռագործ կոոց

ըսելով «Առանք» . . . որ ըսել է , Տէր :
 Ասոնք որքան որ կոոց կաղօթեն այն-
 քան կը չարանան և կանարդեն իւրեանց
 ծնողները , երդումներ կընեն , կը գող-
 նան և սուտ կը խօսին , ու բարկացած
 և կատղած ատեննին ինքդինքնին գե-
 տինը կը զարնեն , մաղերնին կը փեթ-
 տեն , գլուխնին կը ձեխոտեն և ուրիշ
 շատ գէշ բաներ կընեն :



Կը յուսամթէ ախորժելի պիտի ե-
 րեւնայ այս հետաքրքրաշարժ պատ-
 մութիւնը ընթերցողաց , և այս յոյսով
 մեր պատմութիւնը շարունակեմք :

Հնդիկը կըսեն թէ՝ կայ գերագոյն
 էակ մը զոր կը կոչուի ՊՈՒՀԾՄ . նա
 բնաւ չը պաշտուիր և ոչ ալ տաճար մը
 կառուցած կայ նորա անուանն , բոլոր
 Հնդկաստանու մէջ , ինչո՞ւ , քանզի նա
 թմրած է և չը գիտեր ու հոգ չը տա-
 նիր մահկանացուոց :

Եւ Պռահմին տեղը կը դաւանին ու
 կը պաշտեն երեք հարիւր երեսուն և
 հինգ միլիոն աստուածներ . որք են՝
ՀՅԱՆԴ ամեն տեսակ գոյներով , ոմանք սեւ ,
 ոմանք սպիտակ , ոմանք կապոյտ , և
 ոմանք կարմիր : Նաեւ ամեն տեսակ
 ձեւերով ու հասակներով , ոմանք ա-
 նասունի կերպարանքով և ոմանք մար-
 դոց : Աստուածներ՝ որ կը հեծնեն փի-
 շերու և սիրամարդներու վրայ , օձե-

բու և առնետմուկերու վրայ . աստ-
ուածներ՝ որ կը կրեն ամեն տեսակ
զէնք ձեռքբերնին , նիզակներ , բիրեր ,
աղեղներ ու նետեր , և կը պատերազ-
մին ու կը կոռուխն իրարու հետ . աստ-
ուածներ՝ որ սուտ կը խօսին , գողու-
թիւն կը նեն , կը չնան . կսպաննեն և
ուրիշ ամեն եղեռնագործութիւններ
կը նեն , նաև անէծքներ կը ժայթքեն
երբոր չը կրնան յաջողիլ իրենց գաւե-
րուն մէջ և կը գործածեն ամեն տեսակ
խարդախութիւններ իրենց չարութիւն-
ներն ծածկելու համար :

Ունին գլխաւոր աստուածներ՝ որք
կը բաղկացնեն հնդկական երրեակը ,
որոնց անուններն են Պրումհա , Վիշնո
և Սիվա , Պրումհա աշխարհ ստեղծողն
է կըսեն , Վիշնո՝ պահպանողը և Սիվա
կործանողը , Պրումհա ոչ երբէք կը
պաշտուէր մեծ սուտ մը խօսած ըլլա-
լուն համար . և պիտի ըսեմ ձեզի թէ
ի՞նչ սուտ է : Անդամ մը (կըսեն) վէճ

մը եղաւ մէջերնին , այսինքն՝ Պրում-
հաին ու Վիշնօին մէջ տեղը թէ որս
ենք մեծը , եւ երբ կը վիճէին , Սիվա
երեւցաւ երկուքին մէջ տեղը իրրեւ
հրեղէն սիւն մը , և ըսաւ անոնց , ձեղ-
մէ ով որ առաջ գտնէ սիւնին յատակը
կամ գագաթը՝ ան է մեծը :


Հիմա Վիշնօ անմիջապէս խոզի
փոխուեցաւ ու սկսաւ փորել երկերը
սիւնին յատակը գտնելու համար : Պը-
րումհա փոխուեցաւ կարապի մը , թը-
ռաւ վեր գէպ ՚ի սիւնին գագաթը և
աղաղակեց , գտայ , երբ գեռ չէր գը-
տած : Եւ ահա այս ստախօսութեանը
համար բնաւ չը պաշտուիր , Վիշնօ ալ
գող և ստախօս էք : Ատեն մը նա կը
բնակէր ագարակի տէր մարգու մը
տուն ու շարունակ կոգի և մածուն կը
գողնար կն ոջմէ որ ժամանակ մը չը
գիտցաւ թէ ինչ կըլլար կարագը և մա-
ծունը . բայց վերջը գիտցաւ թէ Վիշ-
նօ էր գողը , եւ այս գողութեանը հա-

մար զինքը պատժել ուզելով՝ կապեց
զանիկայ բրինձի սանդի մը վրայ :

Սիվան ալ գէշ էր միւսներուն պէս ,
և ասոնց ըրածները ձեղի պատմելուս
պատճառն այն է որ դուք ուրախ ըլ-
լաք քրիստոնեայ երկրի մը մէջ ծնած
ըլլալնուդ համար . որ ունիք Սուրբ
Գիրքը ամեն աղէկ բաներն անկէ ուսա-
նելու , քանզի եթէ չունենայիք՝ դուք
ալ պիտի պաշտէիք ասանկ թշուառ
կուռքեր, ինտոր որ Հնդիկը կը պաշտեն:


ՅՕԴՈՒԱԾ Գ.

Արդէն ըսի ձեղի թէ Հնդկաց
պաշտած աստուածներէն ոմանք մար-
դակերպ են և ոմանք անասնակերպ :
Այս աստուածներէն մէկը ես հետո բե-
րի ու հոս անոր պատկերը կը դնեմ :



Այս կուռքին անունն է Բոււլվըր ,
և ուրիշ տեղեր կը կոչուի Պունէլո կամ
Կընէսէննէ : Ասիկայ մասամբ մը ա-
նամնակերպ է և մասամբ մը մարդա-
կերպարան , պատկերին տակը կայ
առնետ մը , որուն վրայ աստուածը կը
նստի : Ասիկայ այն արձանին պատկերն
է որ կը պաշտէր Ռաամու անուն մարդ
մը , որ հիմա քրիստոնեայ է Մատրա-
սի մէջ : Աս էր իր տանը կամ ընտա-
նեկան աստուածը :

Երբոր Մ . Ուխնալօ և ես առաջին
անդամ այդ քաղաքը գացինք Ռաամու
շատ հակառակեցաւ ճշմարտութեան .
բազում անդամ իւր թշնամութիւնը
յայտնեց մեր գրքերն պատռելով ,
բայց Աստուած ողորմեցաւ իրեն , իւր
չնորհաց լցոյս նորա սրտին մէջ ծագե-
լով , և եղաւ բարեպաշտ քրիստոնեայ
մը իր տունովը :



Արդ՝ ըսեմ ձեզի թէ ինչպէս կը
պաշտէրնա այս պատկերը , որպէս զի
խորհիք ձեր վրայ թէ դուք ալ կընուի-
րէ՞ք այնչափ երկար ժամանակ ձեր
Տէրը պաշտելու՝ որչափ որ նա կը վատ-
նէր իր կուռքը պաշտելու :

Սովոր էր նա ամեն օր իր կուռքին պաշտօնը կատարելու . ուստի առաջ-ուանց կանուխ կ'ելլէր՝ կը լուացուէր բոլոր մարմառվ, զի այնչափ սուրբ կը սեպէր զայն որ անլուայ չէր կընար մօ-տենալ. ինքը լուացուելէ յետոյ իր կուռքն ալ կը լուար, և այս էր իր ա-ռաջին դործը :

Բ. Կօծէր զնա իւղով :

Գ. Կը ճեփէր վրան սուրբ աճիւնով, զոր բոլո՞ր թուլլիէր աստուածը պաշ-տողները իրենց ճակատնուն, կուրծ-քերնուն և բազուկնուն վրայ կը քսէին :

Դ. Սանդալ ըսուած փայտէն կը ծխէր անուշահոտ ընելու համար, ճիշդ-ինչպէս որ մեզմէ շատերը անուշահոտ իւղեր կը դնեն իրենց թաշկինակնուն վրայ անոյշ հոտելու համար :

Ե. Ծաղիկներ կը դնէր շուրջը : Ան երկրին մէջ ձմեռ չկայ, ծառերն միշտ կանաչ են, ծաղիկներ կը դանուին դաշտերն ու պարտէղները, այս ծա-

զիկներէն քաղելով, խուրձ խուրձ կը-նեն և կը բերեն իրենց կոսց տաճար-ները, զանոնք գեղեցիկ երեւցունելու համար :

Զ. Բանջար և նշեղէն կ'դներ առջեւը ծամելու համար : Այն երկրին մէջ սո-վորութիւն կայ ատոնք ծամելու, ինչ-պէս որ Եւրոպա ալ սովորութիւն կայ ծխախոտը ծամելու . բայց կընա՞յ կուռ-քը ծամել կտմ ուտել, ինչո՞ւ կը դնէ առջեւը, ճիշդ ինչպէս որ փոքրիկ աշ-ջիկները իրենց ուղիւներուն առջեւը կը դնեն սեղան մը և անոր մէջը փոքրիկ ափսէներով զանազան ուտելիքներ, քիչ մը շաքար, քիչ մը մրգեղէն և լ. որ-պէս թէ անոնք պիտի ուտեն, և այս-պէս կը խաղան անոնց հետ, ճիշդ ա-սանկ ալ հեթանոսք կը խաղան իրենց կուոց հետ :

Է. Քափուր կայրէր այս կուռքին առջեւը ու կը կրկնէր իր սուրբ աղօթք-ներն, թէպէտ և թութակի մը իր խօ-

սածը հասկնալէն աւելի բան չէր հաս-
կընար իր աղօթքներէն :

Որչափ շնորհակալ ըլլալու ենք սի-
րելիներս , որ քըստառնեայ երկրի մէջ
ծնած ենք , որ մեր ծնողք ուսուցին
մեղի երկնային աղօթքներ , որոնց նը-
շանակութիւնը կը հասկնամք երբոր կը
կարդամք , ինչպէս հետեւեալ աղօթքը :

« Հիմայ ես որ պառկիմ պիտի ,
Տէր կըյանձնեմ անձս քեզի .
Ներելով իմ բոլոր մեղքերս ,
Պահէ անվտանդ զիս այս գիշերս » :

Օմ քունկըուրնա քաթէյեա նում-
մա , օմ զէվայեա նումմա , օմ քավում
տատալսունա քավայեա նումմա , օմ
իյում քիլէյում քավում , քավում քիլ-
էյում իյում սընթէյտ սավուն թա-
տէյեա նումմա , ինթէ տայեա նումմա
էյումատայեա նումմա , վատունայեա
նումմա քուքայտիա նումմա :

Ամէն ուրբաթ օր , Առամու , բոլոր
այս պաշտամանցը վրայ կըյաւելոյր
նաեւ զայս , որ կեփէր բընճ և հա-
զարջ ու կը մատուցանէր կուռքին :

Հ Յ Ռ



Որովհետեւ հեթանոսք չունին ճըշ-
մարիտն Աստուծոյ գիտութիւնը՝ հե-
տեւաբար չեն կրնար ունենալ փրկչին
գիտութիւնը, ուստի զանազան միջոց-
ներ հնարած են իրենց աստուածնե-
րուն հաճոյ ըլլալու համար որ երկինք
երթան, ևն. որոնց մէկ քանին պիտի
յիշեմ:

Ոմանք կը վառեն կանթեղ մը տա-
ճարին մէջ, զի շատ արդիւնաւոր գործ
մը կը սեպեն զայս. ոմանք կը թաւա-
լին տաճարին շուրջը մեծ կառքով
թափոր հանուած կուռքին ետեւէն:
Ոմանք ողջ ողջ կը թաղուին փոսերու
մէջ զոր կը փորեն իրենց ազգական-
ները. ոմանք կամաւ կը խեղդուին ոըր-
բազան գետերու մէջ:

Երբոր խեղճ ջերմեռանդ հեթա-

նոս մը ուղէ երկինք երթալ, կերթայ
շուկան, և կը գնէ ջուրի կոյժ մը ու
թաղարներ և սաւան, կը կանչէ քա-
հանայ մը, կի՞նէ գետը ու նաև մը
մտնելով քահանային հետ կերթայ գե-
տին մէջտեղը: Յայնժամ իր պարանոցը
կը կաղէ ջրին ամաններն ու կը նետուի
գետը: Նաւուն մէջ եղող բարեկամշ-
ներն կամաց կամաց կը լեցնեն այն ա-
նօթներն ջրով կամ ինքն իր ձեռօքը
երբ գեռ. կը տատանի հոսանքն ի վար:
Եւ ջուրերն լեցունելուն պէս՝ նա քարի
նման ջուրին տակը կի՞նայ ու ալ չը
տեսնուիր. եւ այսպէս հեղձամահ կը լ-
լայ կրօնքին անունովը: (Զի իւր ոըր-
բազան գետերն կը ծանուցանեն թէ
ինքզինքը ջուրին մէջ հեղձունողը եր-
կինք պիտի երթայ):

Հնդկաստանի շատ կողմերը մին-
չեւ այսօր այրի կանայք ինքզինքնին
կայրեն: Գուցէ լսած էք փայտակոյտը,
որ է փայտի տեղ մը յատուկ պատրաս-

տուած . որուն վրայ կը տրուի հօրը
մեռեալ մարմինը մօրը ողջ մարմինն ալ
հետ այրուելու համար . ո՞վ է մեռ-
եալը , հայրը . ո՞ղը , մայրը . եւ փայ-
տակոյտին շուրջը կը կենան պղտիկ տը-
ղաքները . ի՞նչու , լալով կըակը մէկդի
առնելու համար . ո՞չ , այլ իրենց ասո-
ուածոցը անուամբը կըակը փայտերուն
վրայ դնելու համար , որ մայրերնին
այրի ու իրենք ալ որբ մնան անբարե-
կամ աշխարհի մը մէջ : Սիրելի տղաքս ,
դուք ալ պիտի ուղէիք և այրէիք ձեր
սիրելի մայրերն , եթէ Հնդկաստանի
այն կողմերն ծնած ըլլայիք : Ուրեմն
որչափ չնորհակալ ըլլալու էք որ քրիս-
տոնեայ երկրի մէջ ծնած էք և ունիք
Աստուածաշունչը որ կուսուցանէ ձեզի
բնաւ այսպիսի բարբարոսութիւններ
չնել : Եւ ի՞նչ կը խորհիք թէ ի՞նչու
այդ թշուառ մայրերն կը թողուն իրենց
զաւկներուն որ այրեն զիրենք ցմահ ,
այս է պատճառը , որ իրենց սուրբ

գերքը կը ծանուցանէ թէ այն այլիներն
որ ինքինքնին կայրեն իրենց արանցը
դիերուն հետ՝ երկինք կերթան . քանի
մը վկայութիւններ յառաջ բերեմ , ա-
նոնց սուրբ դրքէն :

«Զկայ առաքինութիւն մեծ քան այ-
րի կնոջ մը ինքինքը իր էրկանը հետ
այրելու ո՞չ երբէք ուրիշ գերազանց
պարտաւորութիւն մը կատարելը զիտ-
ցուած է առաքինի կնոջ մը՝ իր էրկանը
մահէն ետքը քան՝ ինքինքը նետել
նոյն կրակին մէջ : Յօ միւլոն մազ կայ
մարդկային մարմնոյն վրայ , այն կինը^ո
որ փայտակոյտը կելլէ իր էրկանը հետ՝
այնչափ տարի պիտի կենայ երկնից մէջ
եթէ էրիկը իւր բարերարն ալ սպան-
նած ըլլայ՝ կինը անոր հետ այրուե-
լով՝ պիտի քաւէ բոլոր անոր մեղքե-
րը » :

Ուրիշ պատճառ մ'ալ թէ ինչո՞ւ
այրին կայրէ զինքը իր էրկանը հետ ,
այս է որ ինքը շատ ատելի պիտի ըլ-

լայ եթէ չընէ : Որևէ իցէ Հնդկուհի մը
զրկուեցաւ իր էրիկէն՝ նորա մեռնե-
լովը . անմիջապէս վրայ կը համեմն քա-
հանայնեցն ու Պուահմինեցն , ի՞նչ ընե-
լու միսիթարելո՞ւ զնա իւր ցաւոցը մէջ ,
ո՞չ , սա զարհուրելի ընտրութիւնը ը-
նել տալու որ՝ կամ մազերը գերծուած
շարունակ առանձին նստի անարդուած
ու խայտառակ , և կամ երթայ այն
մահաբեր փայտակոյտը ու հոն ինք-
զինքը զոհ ընէ :

Պատմեմ ձեզի այսպիսի քանի մը
դէպքեր .

Քիչ ժամանակ առաջ Լատիւրի թա-
գաւորը մեռաւ , և մարմանոյն այբմանը
առաւօտը իրը Առ անձինք այրուեցան
անոր հետ բոլոր Լատիւրի հաւաքեալ
ժողովրդեան առջեւ , որոնց կարծեմ
հինքը կամ եօթը թագուհիներ էին :

Ուրիշ դէպք մը ևս առաւել սոս-
կալի :

✓ Մանկամարդ այրի մը Առ տարեկան ,

Էրիկը մեռնելուն պէս վճռուեցաւ այ-
րուելու մահարոց փայտակոյտին վրայ ,
զոր պատրաստեցին աղդականներն ,
ու իր հօրեղբայրը կրակեց . զի զաւակ
չունէր . խեղճ մատաղ այրին ըլ գիմա-
նալով վար ցատկեց . բայց նոքա ձեռ-
քերէն ու ոաքերէն բռնելով կրկին վր-
ան նետեցին , դարձեալ նա ցատկեց
Կիզող փայտակոյտին վրայէն ու վա-
զելով մօտը դմնուած աղբիւր մը պառ-
կեցաւ ջուրին առուին մէջ դառնապէս
ողբալով , սաւան մը բերին ու հօրեղ-
բայրը կը թախանձէր որ անոր մէջ
փաթթուի , իսկ նա մերժեց ըսելով
թէ նորէն կը տանիք զիս կրակը , և
կաղաչէր որ եթէ դթան իր վրայ ու
ազատ թողուն . ինքը յանձնառու է
մուրալով ապրիլ տունէն հրաժարելով ,
վերջապէս հօրեղբայրն երդում ըրաւ
Դանդէս գետին վրայ (զար իբրեւ ա-
ծուհի կը պաշտեն) թէ շիտակ տուն
պիտի տանին երբոր հանդերձին վրայ

նստի . նա ալ մտիկ ընելով հանդերձին
մէջը փաթուեցաւ անոնք ալյանկարծ
փայտակոյտը տարին որ աւելի բոր-
բոքեալ էր , և նետեցին բոցերուն մէ-
ջը : Խեղճ արարածը անդամ մ'ալ ջա-
նաց ինքզինքը աղատել , բայց ներկայ
եղողներուն գրգռմամբը Մահմէտա-
կան մը մօտենալով իր սրովը կարեց
դիմէն ու ետեւին վրայ իշխալով սպա-
ռեցաւ :

Մր. Քամալիլ այրիի մը փայտակոյ-
տին վրայ այլուրիլ պատմելով կըսէ :
Տեսայ իր շնչելը փայտակոյտին շուրջը
և անկէ ետեւ ելլելը մահուան անկող-
նոյն վրայ , և կապուիլը և էրկանը մեռ-
եալ մարմնոյն հետը : Տեսայ իւր գո-
հարներն ականջներէն և պարանոցէն
ու մարմնոյն զանազան մասերէն հա-
նել , և իբրև յիշատակ բարեկամներուն
ընծայելը : Տեսայ իւր որդւոյն ջահը
ձեռքը առնուլ և ամէն կողմերէն փայ-
տակոյտը բռնկցնելը իր մայրը սոսկալի

բոցերուն մէջ սպառելու համար : Տե-
սայ անդութ սպասաւորաց խուրձե-
րու ծածկոյթին չուաններն կտրելը
որ անոր գլխուն վրայ իշխան ու կոխեն
և ք թողսւն փախցնել , ու բոցերուն
սաստկացած և փայտակոյտը կրակի
գէղ մը եղած ատենն լսեցի պարփա-
կող բաղմութեան ահուելի աղաղակը
և ծափահար ցնծութիւնը խեղճ զոհին
ճիշը ըըլսուելու համար , ո՞հ , կարծե-
ցի թէ դժոխային լճին եղերքը կայ-
նած եմ , և զարմացայ որ երկիրը ք
բացաւ իր բերանը կլլելու այս սոսկա-
լի սպաննութեան գործը կատարողնե-
րը : Հոս կը դնեմք այս թշուառ կը-
նոջ այլուրիլը ներկայացնող պատկե-
րը :



Այս սրասաճմկիկ եղելութեանց պատ-
մութիւնը սիրելիներս պէտք է որ ձեր
սղտերը շարժէ մեծաւ չնորհակալու-

թեամբ վառք տալու Աստուծոյ , որ
այն մութ երկրին մէջ ծնած չէք . զի
եթէ դուք ալ հսն ծնած ըլլայիք , դուք
ալ ենթակայ պիտի ըլլայիք բոլոր այն
շարհուրելի աղետիցը զորս այժմ նը-
կարագրեցի ձեր առջեւը :




Հնդկաց մէջ գաս մը մարդիկ կան
եւճէ կամ ուխտեալներ կոչուած, ո-
րմնք սաստիկ կը չարչըեն ինքզինքնին.
Նպատակնին տնական աղանդաւորաց
նպատակն է, որ է մարդկային զգա-
ցումը խլել:

Ոմանք խոռոշներու և փապարներու
մէջ կը բնակին. ոմանք ծանր շղթայ մը
կը կրեն. ոմանք կայսրութեան մը տա-
րածութիւնը շրջան կընեն ծունկերնուն
և ձեռքերնուն վրայ սողալով, ոմանք
կը թաւալին ինդոս գետին եղերքէն
մինչեւ Գանդէս :

Մր. նեյքը Հնդկաստանու քարողիչ
մը իր վերջին նամակներուն մէջ կըսէ
թէ Հնդկաստանի ուխտաւոր մը ինը
տարիէն աւելի ժամանակ անցուցեր էր
Պինարիսէն մինչեւ Քօմօրին գլուխը. որ

է Հիւսիսային լայնութեան 27 աստի-
ճանէն մինչեւ 7 աստիճանը : Բոլոր այս
ճամբորդութիւնը ըրեր էր մերկ գետ-
նին վրայ թաւալելով մէկ կուշտէն մէ-
կալը, օրը 3 մլոն տեղ: Ուխտեալներէն
ոմանք կերթան կուգան բոլոր իրենց
կենաց ժամանակը մեղմ կրակի մը վր-
այ . ոմանք ալ կը կայնին երկու կը-
րակներու մէջ տեղը . ոմանք վեր կը
բռնեն մէկ կամ երկու բաղուկնին մին-
չեւ որ Ալանունքնին կը խստանան և ի-
րենց անդամներն կըլլան կոճղի նման:
Ոմանք կը տանջեն ինքզինքնին ծառի
մը ոստին վրայ գլխիվար կախուելով
մինչեւ որ մաղերնին գետինը հասնի:
Ոմանք կը պառկին երկաթ բեւեռնե-
րով մահիճի վրայ :

Ոմանք մեծ երկաթ վանդակներ
կանցունեն պարանոցնին ինչպէս որ կը
տեսնէք հետեւեալ պատկերը .




Ես տեսայ ոչ միայն մարդ , այլ կին
ալ չնդկաստանի մէջ որ այս մեծ քա-
ռակուսի վանդակներն կը կրէին վի-
զերնին , որոց լայնութիւնը և երկայ-
նութիւնը երկու ոտք էր : Ամոնք իրենց
ըած մէկ ուխտը կատարելու համար
կը կրէին . զոր օրինակ , թէ որ մայր մը

Խիստ հիւանդ տղայ մը ունենայ , կը-
սէ , « Հիմայ ո՛վ Սուամիիէ թէ որ բը-
ժշկես իմ տղեկս . երկաթ վանդակ մը
պիտի կրեմ պարանոցիս վրայ բոլոր
կեանքիս մէջ » : Այս ուխտը ընկլէն եւ-
տեւ եթէ տղան առողջանայ մայրը կը
խորհի թէ Սուամիիէ բժշկեց անիկայ ,
և իր ուխտը կատարելու համար բոլոր
կենացը մէջ այդ պատիժին տակը կը
մտնէ :

Ուրիշ ջերմեռանդներ ինքզինքնին
դահավէճ տեղերէ վար կը ձգեն ու
կտոր կտոր կըլլան . ոմանք կը թաղեն
ինքզինքնին փոսերու մէջ , զոր իրենց
մերձաւորներն կը փորեն : Ոմանք չուան-
ներով կամ զդթայիւք ծառերը կը կապ-
ուին մինչեւ որ մեռնին : Ոմանք այն-
չափ երկար և ակնկառոյց երկինք կը
նային , որ իրենց պարանոցին մկա-
նունքները կը քաշուին և այլ կերակուր
չեն կրնար ուտել բայց միայն հեղուկ
բաներ : Ամեն տարի Սիվային տօնին օ-

ու ժողովուրդներն սոսկալի արարու-
զութիւններ կը կատարեն ինքոյնքնուն
վրայ :

Ոմանք բարձրէ մը վար կը նետուին
երկաթ բեւեռներու վրայ կամ յարդի
պարկերու , որոնց մէջ դանակներ կան.
ոմանք կը խաղան կրակին վրայ . ոմանք
լեզունին կը ծակեն երկաթով մը ու
ողջ օձեր կանցունեն բացուած ծակե-
րէն : Ոմանք գնասաւըներ կը մծեն
կուրծքերնին և ձեռքերնին . ոմանք բո-
լը դիշերը կը նստին տաճարին քովը
կանթեղներով որոնց ծայրը դպած մե-
տաղեայ թելերէն ճակատնին կը տան-
ջեն . ոմանք երկու ճանկ իրենց կը ո-
ւակնին անցուցած կը տարուքերին օ-
դին մէջ , ինտոր որ կը տեսնէք հետեւ-
եալ պատկերին վրայ :




Հնդկաստանի գլխաւոր աստուած-
ներէն մէկուն անունն ալ Ճիշտէ է .
Քիչ մըն ալ անոր վրայով պատմեմձե-
զի : Ասիկայ Վիշնօին մէկ մարդեղու-
թիւնն է , եւ կը նշանակէ «Աշխարհին
տէրը» . ունի զարհուրելի կերպա-
րանք մը ինչպէս որ կը տեսնուի այս
պատկերիս մէջ ,



Նորա տաճարն Օրիսայի մէջ Հնդ-
կաստանու ամենէն երեւելի տաճարն
է , նորին շուրջը տասը մղոն հեռաւո-
րութեամբ անցագիր մը սեպուած է ,
մահը երկինք մտնելու : Կը կարծուի
թէ միլիօնէ մը աւելի ժողովուրդ կեր-
թայ այս տաճարը ամեն տարի , որոնց
ումանք ճամբուն բոլոր հեռաւորութիւ-
նը իրենց մարմնովը կը չափեն , ինտոր
որ հիւս մը իր կանգունովը տախտակ
մը կը չափէ : Ծերն ու հիւսնդը յանձն
կառնուն այս չարչարանքը իրրեւ դեղ
մը ամեն չարեաց : Հաղարաւորներ կը
մեռնին ճամբան թէ գայած և թէ
գարձած ժամանակնին . զի շուրջանա-
կի բազում մղոններով լեցուն են խեղճ
ուխտաւորաց ոսկորներովն ու սկաւա-
ռակներովը : Աւելի շատ կը մեռնին
տաճարէն գարձած ատեննին : Շատ
անդամ բաւական ստակ չեն ունենար
կերակուր գնելու , և յայնժամ աւե-
լի արագ կը լլայ մահուան գործը , և

ուխտաւորաց խուժանը կրնայ ոսկոր-
ներուն հետ ճադարներուն և անդզնե-
րուն կերակուր ըլլալ։ Ճաճարին մօտ
երկիրը կարծես թէ սովու և ժանտախ-
տի երկիր մըն է։ Ամեն մէկ սահմա-
նին մէջ մեռեալ մարմիններ կը տես-
սուին, երբոր ձկվոնաթ՝ կառքը գըր-
ուած թափոր կը հանուի տաճարին
շուրջը, խեղճ խարուած ուխտաւորնե-
րըն ինքզինքնին անոր անիւներուն
տակը կը նետեն և կոխուելով կը մեռ-
նին. աստուածնին կը զուարճանայ ե-
ղեր երբոր ասանկ կընեն։




Ճկկոնաթուքաղքին մօտը կը տես-
նուին բազմութիւնք, խեղճ խարուած
արարածներու, ոմանք բոլոր օրը դը-
լուխնին գետինը ու ուաքերնին դէպ
՚ի վեր օդին մէջ, ոմանք աչքերնին տըղ-
մով խճողած և բերաննին յարդով, ու-
րիշներն ջրոյ լճի մը մէջ փուռուած, մին
իր ոտքը վիզին կապած, ուրիշ մը
կրակի թաղար մը կուրծքին վրայ դը-
րած, կամ լարերէ շինուած վարմի մը
մէջ փաթթուած :



Յօդուած է .

Քիչ մըն ալ Սակօր կղղիին վրայ
պիտի պատմեմ ձեզի : Այս այն կղղին
է զոր տեսայ 128 օր ծովլու վրայ ճամ-
բորդելէս ետքը :

Այս կղղին Հուկի գետին բերանը
կիյնայ և Գանգէս գետին բերաններէն
մէկն ըլլալով շատ սուրբ տեղ մը սեպ-
ուած է : Մեծ բազմութիւնք ժողո-
վրդեան ուխտի կ'երթան հոն : Գեռ
քիչ ժամանակ յառաջ իբր 300000 ան-
ձինք ժողուած էին : Որոնք հոն տա-
նող 80 հազարի չափ նաւակներ բըռ-
նուեցան : Աս է անոր տեղը ուր որ
հարիւրաւոր մայրեր ժամանակին իրենց
տղաքները գետը կը ձգէին կոկորդի-
լուններուն բերանը, և հոս է նաև այն
տեղը, ուր որ յիշեալ մայրերն աղա-
ղակելով կ'ողբային, եթէ այն դաղան-
ներն բուն իրենց աչքին առջել նետած
տղաքնին գեշատելով չկլէին :




Տեսէք թէ ինչ զարհուրելի կրօնք
մըն է որ մայրերն այսչափ քարափիրտ
կընէ : Հաւերու կամ ձագերուն կեր
տուած ատեննիդ ինտոր կը վազեն
կուդան ձեր առջեւը ու կուտեն գա-
րին կամ կորեկը , ճիշտ անանկ ալ
կոկորդիլոսներերն կուգան կը մօտե-

նան այս մայրերուն և կը գիշատեն
այն խեղճ տղաքները . զորս նոքա կը
նետեն անոնց բերանը ինչպէս կը տես-
նէք պատկերին մէջ :

Արդ՝ ինչպէս որ ըսի , Հնդկաստա-
նի ժողովուրդը սուրբ կը համարի Գան-
գէս գետը , և այս անունը առնուած
է կունկա աստուածուհւոյն անունէն
որուն համար կըսեն թէ երկինքէն ի-
ջաւ ու հարիւր վտակներու . բաժնուե-
ցաւ : Ոյս հարիւր վտակներն աստուա-
ծուհւոյն բերաններն են : Բոլոր գասր
ժողովրդեան կը պաշտեն զայն . իրենց
սուրբ գիրը կը ծանուցանէ թէ Գան-
գէս գետին անունը կանչողը կամ
տեսնողը և գպողը բոլոր մեղքերէն կը
սրբուի : Մէջը լուացուողը այնչափ օրհ-
նութիւններ կընդունի որ ոչ մէկը կըր-
նայ ունենալ , վասն զի գետին եղեր-
քը կամ հոսանքի մը մէջ թողուած
ջուրեր խմելովնոյն ատեն աղմաշաղախ
ըլլալով մեռնիլը շատ սուրբ կը սեպ-

ուի : Ասոր համար երբոր կըսպասուի
թէ մէկը պիտի մեռնի այն խեղճ հի-
ւանդը ուզէ չուզէ փութով գետը կը
դրուի : Երբեմն բուն հիւանդաց աչքին
առջեւը կը դիզեն՝ անսնց դիերն այրե-
լու փայտերը ի՞նչ անդիթութիւն : Եւ
երբեւ մեռեալ զանոնք խարոյկին վր-
րայ դրած ատեն , երբ անոնք մեռած
չըլլալով կենդանանան ու ելլելու ջա-
նան , խորհելով թէ նոքա դիւահարած
են , կայինով կամ պամպու ըստած
փայտով կը զարնեն : Եթէ դուք՝ ալ
գանդէսին եզերքը գտնուիք . պիտի
տեսնէք որ երկու երեք երիտասարդ-
ներ կը բերեն հիւանդ կին մը , ու թէ
որ հարցունէք ո՞ւր կը տանիք այդ-
խեղճ հիւանդը , կամ ի՞նչ պիտի ընէք .
գուցէ պիտի պատասխանեն , «կունկա-
յին բերնք որ մաքրուի հոգին ու եր-
կինք երթայ , զի ասիկայ մեր մայրն
է» ուրիշ տեղ մը պիտի տեսնէք հայր
մը ու մայր մը տղմուտ ջրով կը լոգ-

ցունեն իրենց սիրելի զաւակը ու անոր
մահուան տագնապը մեղմացնել ջանա-
լով կըսեն , « երանելի է կունկային
քով մեռնիլը որդեակս , կունկային
քով մեռնիլը օրհնեալ մահ մըն է » :
Ուրիշ տեղ մըն ալ պիտի տեսնէք մէ-
կը ջուրին մէջնստած քահանայով մը ,
որ մեռնող հիւանդին կոկորդնիվար
կը լեցնէ տիղմ և ջուր ու կաղաղակէ .
«ով մայր կունկա ընդունէ ասոր հո-
գին » , և այսպէս նա հեղձամահ կը
կորսուի յանուն կրօնքին :



Երբեմն օտարականներ կը ձգուին
մեռնելու գանդէսին եղերքը , առանց
ջրէն խմբընելու արարողութեանը , ո-
րոց ոմանք կը տեսնուին որ լանջաց
վրայ կը սողան , մարմիննուն կէսը
թռչուններէն կերուած , ուրիշներն ի-
րենց շուներէն և ճադարներէն պատ-
ռուած անդամներովը , և ուրիշներ ալ
միջատներով ծածկուած :

Հիւանդն գետը տարուելէ յետոյ ,
եթէ կրկին առողջանայ , մեծ գժբախ-
դութիւն մը . կը սեպուի այս՝ բարե-
կամաց առջեւ , պարզապէս երեսէ
կը ձգուի , և զաւկներն անդամ հետը
հաց չեն ուտեր ու բնաւ չեն մօտե-
նար իրեն :


Պղտիկ տղաքներն կը զոհուին կուն-
կա չաստուածուհւոյն . իրենց մայրե-
րէն՝ անոնց ըրած ուխտին համար :
երբոր զոհին ժամանակը կուգայ ,
կառնեն տղաքնին կը տանին գետը ու
կը մղեն զանոնք և կը քաջալերեն մէջը

մտնելու այնչափ խորունկը , որ հո-
սանքը կառնէ կը տանի . կամ խաբուած
ծնողքներն իրենց ձեռօքը կը հրեն
մէջը և կը խեղդուին :



եալ պատկերը կը ներկայացնէ կին մը ,
որ իր ընծայմերն կը մատուցանէ այս
օձին ,

Հիմա դուք աւելի պիտի զարմա-
նաք , երբոր ըսեմ ձեզի թէ Հնդիկք
օձ ալ կը պաշտեն . օձերուն կամ վի-
շապներուն թագաւորն կըսեն չն է
կամ + այս ըսուած իմը , որ դուք
ալ դիտէք թէ չարաթոյն օձ մըն է :
կըսեն թէ նա ունի հազար դլուխ , ո-
րոց մէկն իր վրայ ունի երկիրը . ասոր
պաշտաման տօնիօրն է յուլիս 23րդ օ-
րը , ժողովուրդը անոր մէկ կաւէ ար-
ձանը կամ պատկերը կը չինեն , ու կը
բերեն կը դնեն առջեւը կաթ , ծաղիկ-
ներ , քօքօ (Հնդկական ընկուղ) , և ու-
րիշ ուտելիքներ , և կը դնեն վար ա-
նոր առջեւ ու կըսեն , «ով աստուա-
ծային Քօպրա պահէ մեղ և պահպա-
նէ , ով չէ՛ ընդունէ այս նուէրն ու հա-
ճութիւն ունեցիր առ մեղ» : Հետեւ-



մարմինը ճրագով մը , կամ կը կտրեն
իրենց մարմինէն և իրրե ողջակէդ ա-
նոր կը մատուցանեն :

Սրդ՝ ասանկ աստուածուհի մը
պաշտօղ ժողովուրդն ալ հարկաւ խիստ
չար ու անզգամ մարդիկ ըլլալու են .
դողերն իրենց չերմեռանդ պաշտօ-
նը կը մատուցանեն անոր՝ որ իրենց
չարագործութեանը համար օդնու-
թիւն գտնեն անկէ :

Խումբ խումբ կը ժողուին ու ա-
րիւնային զոհեր մատուցանելէ , արբե-
ցուցիչ ըմպելիքներ խմելէ , և մարմին-
նին իւղով օծելէն ու իրենց դործիք-
ներուն պաշտօնը կատարելէն յետոյ ,
կերթան աւաղակութեան : Ազօթք մը
ունին զոր կընեն չարութեան գոր-
ծիքներուն օրհնութիւնը մաղթած
ժամանակնին . որ է այս . «՛վ աստ-
ուածուհւոյն կազմած գործիքը . Քառ-
է կը հրամայէ քեզի ծակ բանալ տու-
ներ մտնելու , քարեր՝ սսկորներ՝ ա-

Քիչ մին ալ ՚մ-ռէ չաստուածուհ-
ւոյն վրայ խօսիմ ձեղի : Աս է յոյժ ան-
գութ աստուածուհի մը : Իւր ականջ-
ներուն օղերն ըրած է երկու մեռեալ
մարմիններ . ունի վղնոց մը սկաւա-
ռակէ , և կապած է դօտի մը մէջքը ,
պատերազմի մէջ սպաննած հսկաննե-
րուն գլուխներէն շարահիւսեալ : Կը-
ուի թէ նա երեք ամիս հաճութեամք
կը նայի անոնց՝ որ կ'սպաննեն կոկոր-
դիլոս մը ու անոր արիւնը իրեն կըն-
ծայեն . կախորժի մարդկային զոհերէ
և եթէ մէկը , մարդ մը սպաննէ ու
անոր արիւնը իրեն նուիրէ , հաղար
տարի բարեկամ կըլլայ անոր , և թէ որ
երեք հոգի սպաննէ ու անոնց արիւնը
տանի նուէր ընէ . հարիւր հաղար տա-
րի բարեկամ կըլլայ անոր : Կը բերկրի
նաեւ , երբոր մարդիկ կայրին իրենց

Պետաներ՝ փայտ՝ երկիրը ու լեռներ կը տ-
բելու և փոշին հովերուն ցրուել տա-
լու» . Հոս կայ Քառլէ աստուածուհ-
ւոյն պատկերը իր երկրագուներովը
մէկ տեղ :



Հեդկաց մէկ ցեղը կայ ԹՇէ կամ
Բանչէք ըսուած անօրէն ու չարագործ,
որք իրենց ապրուսաը սպաննութեամբ
ձեռք կը բերեն : Քառլէին կըն-
ծայեն իրենց սկիզբը՝ օրէնքները ու
սպատիւը , և կըսեն թէ այս աստուա-
ծուհին անդամ մը քաշեց հանեց իր
երկնային ծնօտէն ժանիցը մէկը ու
տուաւ իրենց ըսերլով թէ՝ «կընաք գոր-
ծածել ասիկա իբր ոլաք՝ որ բնաւ սի-
տի չմաշի» : Յայնժամ բացուեցաւ իր
կուշտը ու փրցուց իր կողերուն մէկը
և տուաւ անոնց իբրեւ դանակ՝ որոյ
բերանը բնաւ չէր կընար բթանալ:
Աս ընելէն ետեւ վար ոլացաւ , պատ-
ուեց իր հանդերձին ժապաւէնը և տը-
ուաւ անոնց իբրեւ կապիչ՝ որ ամենե-
ւին պիտի չթուլնայ որու կոկորդին
վրայ որ ձգուի : Ահա այսպէս անոնց

կրօնքը կը սրբէ ամենավատ եղեռնա-
դործութիւնն ալ:

Այս Թէ՛ ըսուածներն ցրուած են
բոլոր Հնդկաստան և կըսպաննեն ան-
թիւ մարդիկ : Այն յիշեալ կապիչը
մարդոց գլխուն վրայ ձգելով և խեղ-
ջելով զանոնք , զայս կընեն ստակնին
յափշտակելու համար : Բոլոր գողու-
թիւննին սպաննութեամբ է : Խումբ
խումբ գարանակալ կըլլան և կը կո-
ղոպտեն ճամբորդները . երբեմն մէկ
խումբը 60 կամ 70 հոգի կըլլան , և
շատ անգամ երկու կամ երեք խում-
բեր մէկ տեղ մը կընեն իրենց կայանը
անանկ տեղ մը հանգստեան , ուր որ
ճամբորդը կուգայ գլխերն հոն հանդ-
շելու , և քնացած ատենը զանիկայ
քունէն կը հանեն ու կապը դլխուն
վրայէն վիզը ձգելով կը խեղջեն : Բնդ-
հանրապէս մինակ եղող ճամբորդնե-
րուն կընեն ասանկ . բայց ես կարդա-
ցած եմ դէպք մը որ 42 անձինք մէ-

կէն մէկ անդամին սպաններ էին : Թէ՛
որ սպաննուողը շուն ունենայ հետը ,
ան ալ կըսպաննեն որ չըլլայ թէ հա-
ւատարիմ կենդամին երթայ իմացնէ
իր տէշոջը գերեզմանը : Եւ երբոր այս-
պէս կը կողոպտաեն , իրենց կողոպուտ-
ներէն , մէկ մաս մը իրենց աստուածուհ-
ւոյն նուիրելը շատ ընդունելի գործ-
մը կը սեղեն , թէ որ չը կրնան երբեմն
յաջողիլ սպաննութեան մէջ , կը խոր-
հին թէ յանցաւոր են աստուածուհւոյն
դէմ , ուստի ընծայ մը կը մատուցա-
նեն իրեն զինքը հաշտեցնելու համար :

Այս աւաղակներն իրենց սպաննած
մարդոցը պղտիկ տղաքներն չեն սպան-
ներ , անոնց խնամք կը տանին և կը
մեծցունեն , ինչպէս իրենցը . բայց ին-
չո՞ւ , որ իրենց արհեստը ուսանին :
Յատուկ դաստիարակներու կըթու-
թեան տակ կը գրուին որ վարժուին
քաջ ճարտարութեամբ իրենց ընկեր
մարդիկը սպաննել : Երբեմն հայրը կըւ-

ւայ որդւոյն ուստոցիչը , որով նա կու-
սանի թէ արդար և յատկական գործ
մըն է մարդ մը սպաննելը , ինչպէս որ
օձ մը սպաննելը որ ճամբու վրայ պառ-
կած անցնողը պիտի խայթէ : Նոյն ա-
տեն կողոպուտէն ալ փոքր բաժին մը
կը տրուի իրեն որ սպաննութեան բաղ-
ձանք տարածի իր մէջը , տեմնելով որ
սպաննութեամբ ձեռք բերուած է այն
կողոպուտը : Այսու ամենայնիւ մինչեւ
որ կատարեալ մարդ չըլլայ , թոյլ ը-
տրուիր անոր այս զարհուրելի գործին
մէջ մտնել , և այս պատրաստութեանը
սովորաբար գէթ 8 կամ 10 տարիներ
պիտի նուիրէ : Սպաննութեան գործէն
առաջ իր գաստիարակը կապիչ մը կըն-
ծայէ անոր , և այս կըլլայ իրեւ վկա-
յական մը աղատ մարդասպան մը ըլ-
լալու :


Թէպէտե այս աւաղակներն ընդ-
հանրապէս արու մարդիկ են , բայց
կանայք ալ կը գտնուին այս գործին

մէջ . նորա երբեմն կընտրեն գեղեցիկ
աղջիկ մը , և կը դնեն ճամբուն վրայ ,
ուրից ճամբորդը կանցնի . և նա , ճամ-
բորդն անցած ատեն , իր գեղեցկու-
թեամբն ու սուտ պատմութիւններով
կը խարէ զանիկայ մինչև որ մեռցու-
նէ . բայց ինչպէս , ճամբորդն անցած
տեենը կսկսի գառնարցունք պատմել
թէ ինչ պատահեր էր գլխուն որ հոն
ինկեր է ու կաղաղակէ կը պաղատի որ
գթայ իր վրայ ու իր ձիուն գաւակը
գնելով հետը տանի ու աղատէ զին-
քը այն վտանգաւոր տեղէն , ու մար-
դը խարուելով և գթալով իւր գաւա-
կը զնելէն ետքը երբ ճամբան քիչ մը
յառաջ կ'երթան . աղջիկն նտեւէն
յանկարծ իր լարը մարդուն վիզը ձը-
գելով ձիէն վար կը ցատկէ ու քաշ-
ելով կը լսեղդէ :

Ասանկ գէպք մը պատմեմ ձեզի :
Մատրասի նահանգէն մէկ ձիւոր մը
կանցնէր տեղէ մը , ուր որ այս գէտ

կեցող կամ դարանակալ աղջիկներէն
մին կը սպասեր , որ սկսաւ դառնա-
կոծ ողբով պատմել թէ ինքը այս ինչ
տեղէ յափշտակուեր և բռնաբարուեր
էր . ու հոն ձգուած ըլլալով օդնու-
թիւն կը փնտուէր . ձամբորդին դութն
շարժելով իր ձիուն գաւակը առաւ
զանիկայ և քանի մը մղոն յառաջ դա-
ցին , իսկ աղջիկը որ պատեհութիւն
կը հսկէր , խօսքի բռնելով ճամբորդը
յանկարծ նետեց կապը գլխուն վրա-
յէն . և քաշելով զայն բոլոր ուժովը +
կը ջանար զնա ձգել ձիուն վրայէն :
Այս վայրկենիս գունդ մը մարդիկ
դուրս թափեցան մօտակայ անտառէն
և պաշարեցին զինքը . բարեբազդարար
լարը ձգուած ատեն մարդը գլուխը
քիչ մը վար ծուած ըլլալով կինը քա-
շած ատեն չուանը բերնին եկաւ ոչ թէ
պարանոցին , ու ստի նա ակտաններովը
բռնեց : Գաւագործը կարծելովլթէ իր
զոհը ապահովէր , վար սահեցաւ ձիէն ,

իսկ մարդը ձին մորակելով բուռն զօ-
րութեամբ քաշեց ետեւի չուանը , գե-
տինը զարկաւ աղջիկը , որ նա անմի-
ջապէս թող տուաւ չուանը : Մարդն
ինքինքը ազատ գանելով քաշեց սուրբ
և մէկդի ցրուելով աւաղակներն փա-
խաւ , անոնց երկուքը սաստիկ վիրա-
ւորելով : Քիչ ատենէն աս մարդիկը
և ուրիշ տամներկուք ալ հետ աղջկովը
բռնուեցան և դատաւորաց ատեանը
հանուելով՝ մահուան դատապարտ-
ուեցան :



Քիչ մը առաջ մարդազոհերու վրայ
ակնարկութիւն մը ըրի , և հիմա կարգն
է որ խօսիմ :

Մատրաս քաղաքին մօտ Քօնաքըս-
ուած ժողովուրդ մը կայ , որ մարդա-
զոհի հաստատուն սովորութիւն ունին ,
Քունսուրի մէջ կը բնակին , և իրենց
զոհ ընելիք մարդիկը գողութեամբ կը
յափշտակուին ստորին երկրէն , կամ
կը դնուին ու անոնց կը ծախուին , թէ
որ մանչ ըլլան կը պահուին մինչեւ որ
մեծնան :

Երբ որ որոշեալ օրը կուգայ , Քօն-
տերն կը ժողովին երկրին ամեն կող-
մերէն , իրենց զարդերն հագուած ,
ոմանք արջու մորթեր ձգած ուսերնուն
վրայ , ոմանք ալ սիրամարդի պոչեր
եսեւնին կախած , և զլուխներնուն
վրայ աքաղաղի երկայն շարժող փե..

տուրներ : Այսպէս զարդարուած կը
պարեն , կը ցատկեն , կը ցնծան , թմբուկ
կը զարնեն ու նուագարան կը հնչեցը-
նեն , բարձր երկրին սրինդին նման ձայ-
նով : Կէս օրէն ետեւ , քահանան օդ-
նականի մը օժանդակութեամբը կը
կապէ մարդ մը , կամ կին մը , կամ
տղայ մը և կամ աղջիկ մը , գետինը
տնկուած ցիցի մը վրայ , որուն շուրջը
կը կայնին հարիւրաւոր Քօնտեր . Ճեռ-
քերնին մեծ դանակներով և յասուկ
նշան մը տրուած ատեն , բուռն զօ-
րութեամբ կակսին գանակ քաշել խեղճ
արարածին , և կը մրցին թէ ո՞վ կըր-
նայ ամենէն առաջ մարմնոյն մէկ մա-
սը ոսկորէս կտրել . մեծ արծէք կը
տրուի առաջին կտորին վրայ որ մար-
մնէն կը կտրուի , իրեւ մեծ առա-
քինութեան գործ մը . ասիկայ կը
թաղուի հողին մէջ արեւը մանելէն ա-
ռաջ :

Կուտատարուրի մէջ ասկէ տարբեր

կերպով կը կատարուի : Եօթը ստք երկայն փոս մը կը փորեն ու անոր վրայ ողջ մարդը կը կախեն , փոսին երկու ծայրերը սրուած ցիցերու կապելով ստքէն ու պարանոցէն , անսանկ որ չը խղդուելու համար խեղճ զոհը ինք-զինքը վեր կառնէ իր գերեզմանին երկու կողմերուն վրայ դնելով իւր ձեռքերը : Վերակացու եղող քահանան ի պատիւ աստուածուհւոյն զանազան ա-րարողութիւններ կատարելէն ետեւ , կառնէ կացին մը ու կիջեցնէ ստքէն սկսելով մինչեւ ծորակը վեց անդամ հաւասար հեռաւորութեամբ ամեն մէկ հարուածին թիւերը կրկնելով այսպէս՝ ռեարէ , ռէնոքէ , ռէլէքէ , ռէնէքէ , ռէյէքէ , և եօթներորդ հարուածով մըն ալ էյէ ըսելով կը կարէ զլուխը : Եւ մարմինը փոսն իյնալով՝ կը ծածկեն վրան հողով :


Ասկէ բաւական տարիներ առաջ տղայ գողնալը յաճախակի պատահող բան մըն էր Մատրասի մէջ , իմ հոն ե-

դած ատենս բաղում ծնողը կը զրկուէ-ին իրենց տղաքներէն , և այնչափ շատ կը պատահէր զայս՝ որ մեծ կոծ և ա-զազակ կար շատ տուներ , ինչպէս որ եգիպտոս հին ատենը կար : Այս տը-ղաքներն անտարակոյս կունառուր զոհ ըլ-լալու համար կը գողցուէին :

Անդամմը Քամպիլ զօրապետը շատ մը տղաքներ աղատեց անոնց ձեռքէն , « շատ բարերաղդութիւն ունեցայ (կը-ոէ) վերջին արշաւանացս մէջ կունառուրի Քօնտերուն մէջ և իրը 103 տղաքներ աղատեցի մեծ և պղտիկ որք՝ զոհի համար պահուած էին , այն բարբարու-ներէն : Այս տղաքներն հիմա գլխա-ւոր զօրանոցներուն մէջ են , և կը կազ-մեն այնպիսի խումբ մը որ մահուան ճանկերէն աղատուած երջանիկ խումբ մը ըլլալով՝ բոլոր տեսանողաց սւշադ-րութիւնը կը գրաւեն » :

Իրիտանական գունդերն Քօնտ եր-իրը ժամանելէն ետքը կին մը պա-

տահեցաւ բանակին շղթայակապ ոտիւք,
որ մատնիչներուն ձեռքէն փախէր էր,
ու պատմեց թէ ինքը ծախուեր էր իր
բուն եղբօրմէն զոհուելու համար :



Մը. Մօֆթադ կը գտնէ երախայ մը զոր
իր մայրը ողջ ողջ բադէր եր

ՅՈՒՈՒԱԾ ԺԲ.

Խօսք մըն ալ յատկապէս կուզեմ
խօսիլ ձեզի , որ քրիստոնեայ երկրի
մէջ ծնած ըլլալնուդ . համար ուրախըլ-
լաք : Հնդկաստանի մէկ քանի կողմերն
պղտիկ աղջիկներն ծնածնուն պէս կը
մեռցուին : Ճ-Ռ-Ն-Ն ըսուած աղանդա-
ւորներ կան , որոնք իրենց աղջիկ զա-
ւակացը մեծադոյն մասը կը մեռցու-
նեն : Պէնկալի պաշտօնատար աղնուա-
կան մը խրկուեցաւ կառավարութեան
կողմէն հիւսիսային անկախ թագաւո-
րութեանց մէջ , ժողովրդոց թիւը
դանելու համար , և անցած նահանգաց
գլխաւորներն իմացուցին որ բուն ի-
րենց զաւկներէն շատերը սպաններ է-
ին , և իրենց գիտցած դրացին և ծա-
նօթներն ալ իրենցը մեռցուցած էին ,
և այս սովորութիւնը արմատացած էր
ժողովրդին սրտին մէջ : Գիւղի մը մէջ

կային 50 տղաքներ ու միայն 14 աղջիկներ . ուրիշ գիւղի մը մէջ 79 տղաքք և միայն 12 աղջկունք . ուրիշ գիւղ մը 40 տղաք և 2 աղջկունք . և ուրիշ գիւղ մը 22 տղաք և ոչ աղջիկ մը :

Պատմութիւն մը պիտի ընեմձեղի , որ սաստիկ պիտի գալարեցնէ սրտերնիդ . Հնդկաստանի տղոց վրայ : Քիչ ժամանակ առաջ բնիկ իշխանի մը կինը որ Ռաճակ կըսուէր , դուստր մի ծնաւ : Հայրն հրամայեց անմիջապէս սպաննել , զի եթէ մանչ ըլլար պիտի խընամուէր . երկրորդ անդամ ծնաւ ու երրորդ , չորրորդ և հինգերորդ անդամ . և բոլորն ալ սպաննել տուաւ աղջիկ ըլլանուն համար : Վեցերորդ դուստր մի ալ ծնանելով ալ մօրը սիրոը չը դիմացաւ անոր . «Ես չեմ կրնար բան մի ընել ասոր . ըսաւ . պիտի առնեմ պահեմ , այնպէս որ թագաւորը չը դիմնայ » . ուստի հայրը կարծեց որ անշուշտ ան ալ սպաննուե-

յաւ . ասոր համար խեղճ մայրը բնաւ չը համարձակեցաւ բերել տալ իր աղջկը և այլ ևո չը տեսաւ աղջիկը , քանզի մեռաւ քիչ ատենէն : Հնդկաստանի պղտիկ աղջիկներն շատ սիրուն են , կապուտակ աչքերով և վայելուչ դէքքով : Այս փոքրիկ աղջիկն ալ մեծցաւ ու գեղեցիկ աղջիկ մը եղաւ , իր աղդականներէն ոմանք համարձակեցան բերել զնա իւր հօրը քով , կարծելովթէ նա պիտի աղդուի իր սիրուն զաւկին տեսքէն ու պիտի սիրէ զանիկայ մօրը համար որ մեռէր էր : Փոքրիկ աղջիկն իր հօրը ոտքը ինկաւ ու ծունկերը փարեցաւ «Հայրեկս» ըսելով : Եւ հիմա ի՞նչ կը կարծէք որ ըրաւ հայրը , գիշերկը առաւ ու համբուրեց , անանկ կը կարծէք , ո՞չ գլխուն մազերէն բըռնեց՝ մէջքէն սուրը հանեց ու մէկ հարուածով գլուխը կտրեց :

Հնդկաստանի մօտ Զինաստանի եր-

կիրը կայ, որ հոն ալ ստէպ կը մեռցու-
նեն պղտիկ աղջիկները, որը կը խեղ-
դեն, որն ալ փողոցները կը ձգեն ու
միւս առառուն հասարակաց փոսի մը
մէջ կը թաղեն. ոմանց ալ աչքերը կը
հանեն ու կը խրկեն որ մուրան: Հոս
կայ ահա այն խեղճ ջինացի աղջիկնե-
րէն մէկուն պատկերը:



Զար ու անգութ մուլացկան մը
Մօքայի մէջ դողեր էր զանիկայ
իր ծնողքներէն, ու աչքերն հանելով
մէկ բաղուկին և մէկ ոտքին շղերն ալ
կտրեր կաղը ըրեր էր ու խրկեր էր մու-
րալու իրեն համար :



Հնդկաստանի ժողովուրդը շատ ա-
ւելորդապաշտ է . կուզեմ պատմել ա-
նոնց սնապաշտութեան մէկ քանի բա-
ները : Ասոնք օրերը կը բաժնեն ու
շաբթուն խրաքանչիւր օրերը չար ու
բարի կանուանեն : Թէ որ չար օրը
մարդ մը մեռնի , տանը դռնէն դուրս
չեն հաներ մեռելը այլ՝ պատէն ծակ մը
բանալով անկէ կը հանեն : Մատրասի
մէջ բնակած տանս դիմացը մարդ մը
մեռաւ , իրենց չար սեպած օրը , և ա-
զէկ չը սեպելով մարմինը դռնէն հա-
նել , պատը ծակեցին ու անկէ դուրս
հանեցին . ետքը մէկը բռնեցին տանը
մէջ հսկելու և զանգակ մը հնչեցնելու
դիշերը . որ դեւը հալածուի : կը կար-
ծէին թէ մեռած մարդուն տեղը դե-
ւը կուգայ կը բռնէ :

Երբ որ տղայ մը կը ծնանի հայրը

անոր ձեռքը խեցիէ կամերկաթէ ման-
եակներ կանցունէ , գիտէ՞ք ինչո՞ւ հա-
մար . դեւը չը մօտենալու համար :
Այնչափ մնապաշտ են որ կը կարծեն
թէ դեւը պիտի վկասէ իրենց զաւկը-
ներուն եթէ անանկ չընեն ,

Զափազանց հմայութիւններ կը
գործածուին Հնդկաստանի մէջ , բայց
այս կէտին վրայ պիտի չը դեգերիմ :
Հնդկական տաճարներուն վրայով կըր-
նայի երկար խօսիլ . բայց բաւական է
որ այսափ ըսեմ , թէ անոնց շատերն
ունին իրենց վրայ պիղծ ու դարշելի
պատկերներ , եւ անոնց յարողներն են
վատանուն կանայք , որոց գործն է
գարշելի և վավաշոտական երգեր եր-
գել , կընայի նկարագրել ձեզի այդ-
տաճարներուն մէջ կատարուած սոս-
կալի տեսարանները , որոնց համար ի-
բրը 30 տարի Հնդկաստան աշխատող
քարողիչ մը կըսէ թէ չէի կրնար դը-
ժողքին պատկերէն տարբեր բան մը

ըմբոնել երբ անոնց կուտապաշտութեան
հանդէսը կը տեսնէի : Բայց ես պիտի
թողում այս դարշելի բաներուն վրայ
երկարօրէն խօսելը : Արդէն ըսած եմ
ձեզի թէ Հնդիկք շատ չար ու ամ-
բարիշտ ժողովուրդ են : Կուգեմ որ
կարդաք Հռովմայեցոց առաջին դըլ-
խուն վերջին մասը , և յիշէք թէ այն
մեղքերն որ առաքեալը կը յիշէ հօն ,
կը գործեն անոնք և հօն չը յիշուած
շատ մեղքեր ալ : Այս , անոնք անանկ
զարհուրելի մեղքեր կը գործեն , որ
ես չեմ կրնար պատմել ձեզի . անանկ
մեղքեր որ մարդուս խելքէն ու մտքէն
շանցնիր կը կարծեմք :

Արդ՝ ինչ որ պէտք էր ձեզի խօսիլ
հեթանոսաց վրայով խօսելու աւարտե-
լս ետքը , պիտի կարդամ ձեզի երդ
մը թայմը լեզուաւ , որ դիտնաք թէ
հեթանոսութենէ քըիստոնէութեան
դարձող տղաքներ կան ու կ'երդեն և
զԱստուած կը փառաբանեն :

Էլլամ շըլսթիթթա Նամաթու
թիյյեափատա բէթաաեուքքու .
Անունթա քալումաքա ,
Ալլայլուեան մաքքաթույեում ,
Բէլընթութէ էսթօթթէտում:
Ըրնտէյ էտուբբաթաաքա ,
Բարբբար քաբբար .
Վուլլամայեում քէրուբայեում ,
Անքում էնկում .
Ավեր սէյքիյեալ վերլունկքում:

* * * * *

Ո՞ւր կայ հանդստութիւն ,
Յոդնած տրտմած հոգւոյն .
Ունայն է զայն ծովը փնտուել ,
Կամ մինչ բեւեռն քալել :

Աշխարհո չի կրնար ,
Երջանկութիւն մեղ տալ .
Ոչ կեանքս , բոլոր ապրիլն է այն ,
Ոչ ալ մեռնիլ այս մահն :
Այս արտասուած ցորէն ,
Անդին կեանք կայ նորէն .

Ան չըչափուի՛ր տարիներով,
Լեցուն է սուրբ սիրով :

Մէկ մահ մըն ալ կըլլայ ,
Որուն վախճան չկայ .
Ո՞հ , ի՞նչ ցաւք յաւիտենական ,
Երկրորդ մահուան մէջ կան :

Ասոուած , Տէր դժութեան ,
Շնորհքդ թափէ մեր վրան .
Որ մենք փախչինք այն մահուանէ ,
Ու չը զատուինք քեզմէ :



Ճառիս սկիզբէն ըսի ձեզի թէ
Աստուած մեծ շնորհքներ ըրած է ձե-
զի . չէք կրնար խորհիլ թէ դիպուա-
ծով է այս . մինչ այսափ բաներ լսե-
ցիք հեթանոսաց վրայով : Ի՞նչ կը խոր-
հիք սիրելիներս . չէ՞ք զգար թէ նա
մեծ շնորհքներ ըրած է ձեզի , դիտեմ
որ կը ճանչնաք . ուրեմն նա կըսպասէ
որ դուք ալ փոխադարձը ընէք , եւ
առւջին բանը որ ձեզմէ կըսպասէ
այս է , որ թողուք ձեր բոլոր չար խոր-
հուրդները , խօսքերը ու դորձքերը ու
դուք սրաերնիդ Աստուծոյ տաք : Կամ
այլ բանիւ որ սիրէք զնա ուրիշ ամէն
բաներէ աւելի : Արդ՝ կը հարցունեմ
ձեզի , ըրի՞ք և կընէ՞ք այսպէս , եթէ
չըրիք շատ ապերախտ էք դուք . և թէ
որ այդ վիճակին մէջ մնաք թշուառ
պիտի ըլլաք խեղճ հեթանոսներէն

աւելի , որք բնաւ չը լսեցին վրկչին վը-
րայով : Զեր պատիժը ևս ծանր պիտի
ըլլայ քան թէ անոնցը , անոնք քիչ
ծեծ պիտի ուտեն բայց դուք շատ .
քանզի անոնք չեն գիտեր տէրոջը կամ-
քը , ինտոր որ դուք գիտէք . բայց
չըրեք , ուրեմն զղջացէք և սրտերնիդ
Աստուծոյ տուէք այսօր , վասն զի կըր-
նայ ըլլալ որ մինչեւ վաղը յաւիտեան
կորառւիք :

Բայց Աստուած ոչ միայն զղջում
կուզէ ձեզմէ , այլ նաև կուզէ որ բո-
լոր ձեր կրցածը ընէք որ այն խեղճ
հեթանոսներն (որոց վրայ լսեցիք)
փրկուին , իրենց զարհուրելի վիճակէն
Քրիստոսի գալով :

Կը հարցունէք թէ ի՞նչ կընամք ընել
ըսեմ ձեզի : Կընաք աղօթք ընել ա-
նոնց համար : Կուզեմ պատմել ձեզի
պզտիկ տղի մը վրայով որ քիչ ժամա-
նակ առաջ լսեց հեթանոսաց վիճակին
վրայով պատմութիւն մը , գեշեր մը

իր աղօթքը ըլլաւ ու գնայ պառկե-
ցաւ , բայց պառկելին ետքը ըսաւ
սպասուհիին , « դահեակ , ես մոռցայ
աղօթք ընելու հեթանոսաց համար .
պարտիմ ելլել ու աղօթք ընել անոնց
համար » . դահեակն ըսաւ թէ հարկ
չէր որ ելլեր անկողինէն . կընար պառ-
կած տեղն ընել , « ոչ , ըսաւ նա , պար-
տիմ ելլել ու աղօթել անոնց համար » :
Եւ սիրուն տղան հանգիստ չեղաւ մին-
չեւ որ ելաւ անկողինէն ու աղօթք
ըլլաւ հեթանոսներուն համար :



Ուրիշ տղու մը վրայով ալ պատմեմ
ձեզի որ Սէյլընի դպրոցի աշակերտ-
ներէն մէկն էր, և յոյսով եմ թէ
նա երկինքն է հիմա, երկու կամ ե-
րեք սէնթ արժող փոքրիկ տետրակի
մը միջոցաւ, զի այդ էր որ պատճառ
եղաւ իմ խնամքիս տակը դալու :

Այս երկրին մէջ երբոր տղաք հի-
ւանդ կըլլան . հայրն ու մայրը հնդկա-
կան ընկուղմը կամ ջղախոտ ըսուած-
տունկերէն կառնեն, և ձեռքերնին
բռնած տաճարը կը վաղեն ու կըսեն,
«Հիմա Սուամիիէ, թէ որ իմ պղտիկ
տղաս կամ աղջիկս բժշկես, քեզի պիտի
տամ այս ընկուղը կամ ջղախոտը» :

Այս տղուն մայրն ալ երբ տե-
սաւ որ շատ հիւանդ էր, ըսաւ ի-
րեն թէ կուզբօր որ երթար քանի մը
նուէր ընծայէր կուռքին որ ինքը ա-
ռողջանար, նա պատասխանեց թէ ա-
մենեւին չուզէր որ ատանկ բան մը
ընէ, «Ես կուռք չեմ պաշտեր ըսաւ,

Ես կը պաշտեմ ճշմարիտն Աստուած :
Եթէ նա կը հաճի կեանք տալ ինծի
աշխարհիս վրայ աղեկ . եթէ ոչ . ես ի-
րեն պիտի երթամ» : Եւ այս եղաւ իր
վերջին խօսքը . «Ահա ես Քրիստոս
Տէրոջս քովը կերթամ» :



Ինչպէս որ ըսկինք թէ՝ հեթանոսք
իրենց զաւակները կոկորդիլոսին կու-
տային, ոմանք ալ հոսանքին . Հնդ-
կաստանու տղաֆներէն ոմանք ասոր
վերաբերեալ երգ մը շարադրած ըլ-
լալով երբեմն կ'երգէին ինչպէս որ կը
տեսնուի :



Տես հեթանոս մայրն կանգնած,
Եթզր գետոյն սրբազն .
Որ զմանուկն իւր սիրած,
Բուն իւր ձեռօք ձգէ յայն :

Ովլսէ ճիշն մանկիկն ,
Հրէշ կենդանիք որս գտան .
Կամ հոսանքներն ահագին ,
Առնուն տանին խեղճ տղան :

Աղաղակն ի՞նչ աղեհատ ,
Քար սիրոք ալ ոչ հանդուրժեն .
Քայց մօրն սիրտն է պողպատ ,
Գութը փախած է իրմէն :

Ո՞հ . սուրբ գիրքն թող միայն ,
Նորա սրտին շուտ հասնի .
Զայն խրկեցէք , և յայնժամ ,
Մայր գթասիրտ նա լինի :



ՍԵՐԱՆԻ ՓՈՔՐԻԿ աղջիկներէն մին,
Օթուելի գեղերօթիկ դպրոցը աշա-
կերտութիւն ըրած ըլլալով քրիստոն-
եայ եղաւ 13 տարեկան հասակին մէջ,
այս փոքրիկ աղջիկը քրիստոնեայ ըլ-
լալէն ետեւ, ուղեց երթալ տեսնել
եր մայրը որ հեթանոս էր, որ զնա
դարձի բերէ : Այն երկրին մէջ երբոր
տղաք շատ ժամանակ բացակայ ըլլալէն
ետեւ տուն դառնան, մայրերնին փսի-
աթ մը կը փոէ վարը բակին վրայ ու
կըսէ անոնց որնատին վրան, մինչեւ որ
ինքը երթայ բրինծ ապուր եփէ իրենց
համար, այս աղջիկն ալ տուն դնաց,
ու երբոր մայրը տեսաւ շատ ուրախա-
ցաւ, և պրտուն փոելով ըստ որ նըս-
տի ու ինք ապուրն եփէ, պղտիկ աղ-
ջիկն ըստ որ ինքը անօթի չէ, չուզեր-
ուտելայլ միայն խօսիլ իր հետը, «դու

շես կրնար խօսիլ ինծի հետ . ըստ
մայրը, մինչեւ որ ապուր եփեմ քեզի
համար», «մայր, ըստ աղջիկը, դուն
կուռք կը պաշտես ու շատ կը վախնամ
թէ պիտի կորսուիս, ուստի կուզեմ
խօսիլ հետդ Յիսուս Քրիստոսի վրա-
յով», մայրը սաստիկ բարկանալով
չեխեց իր գատրիկը . բայց նա տակա-
ւին կը խօսէր մօրը հետ անոր հոգւոյն
վրայ : Խակ մայրն այնշափ կատղեցաւ
որ ըստ իրեն թէ կամ պիտի լուէ
կամ պիտի պատժուի, փոքրիկ աղջիկը
պատախանեց, «մայր, թէ և զիս
սաստիկ ծեծես, ես պիտի խօսիմ Յի-
սուս Քրիստոսի վրայով», և սկսաւ
դառն արցունք լալ : Մօրը սիրաը կոտ-
րեցաւ ու նստաւ պրտուն վրայ, և իր
փոքրիկ դուստրը խօսեցաւ իր հետը
ու աղօթք ըրաւ, անկէ ետեւ այս աղ-
ջիկը այնշափ հոգ կընէր իր մօրը հա-
մար որ չըլլայ թէ կորսուի, և գիշեր-

ուան շատ ժամերն (ինչպէս իր հայրը վերջը պատմեց) աղօթք կընէր մօրը համար . և Աստուած լսեց իր աղօթքը: Մայրը ձգեց կուռքքերն ու քրիստոնեայ եղաւ , և նորա միջոցաւն ուրիշ մէկ երկուք ալ :

Ուրիշ փոքրիկ աղջկան մը վրայ ալ պատմեմ որ իմ գալրոցներէս մէկուն աշակերտներէն մէկն էր ու աս ալ շատ օգուտ ըրաւ : Քրիստոսի վրայով բաւական գիտութիւն ստանալէն ետեւ սկսաւ կարդալ սուրբ գիրքը իր գասկերիցներուն հետ , և աղօթելնոցունց հետ . նաեւ կը կարդար իր հօրն ու մօրը և աղօթք կընէր անոնց առջեւը: Իր մեծ հայրը գէշ մարդ մ'ըլլալով՝ մաղերէն բռնեց ու ծեծեց կարդարուն և աղօթելուն համար , բայց նա համբերութեամբ տանելով գարձեալ կը շարունակէր իր ընթերցումն ու աղօթքը : Երբոր Ա տարեկան եղաւ , մաղձացաւէն բռնուեցաւ ու մեռաւ : Հի-

ւանդութեանը մէջ երբ զինքը տեսնել գացի , ինծի ըսաւ թէ , « Ես ահա երկինք կերթամ » :

Անդամմը մէկը գնաց նոր Անդդիայէն Հնդկաստան , երբ առառու մը կը շրջէր Գանդէսի եղերքը , տեսաւ հեթանոս կին մը որ իր առջինէկ մանկիկը կունկա աստուածուհւոյն կը զոհեր , սակառ մը շիներ էր կնիւնէ ու մանուկը մէջը զետեղած տուեր էր հոսանքին , աղէկսուր ըլլալով նա այս րանիս վրայ , արտաստալից ցաւակցութեամբ խօսեցաւ իր հեաը : Եւ լսելով թէ ուխտած ըլլալուն համար այնպէս ըրեր է , ըսաւ թէ Հնդկաց աստուածներն աստուած չեն , ճշմարիտն Աստուած չուզեր այդպիսի զոհեր . ու կը գարշի անոնցմէ , եթէ կուզես երջանիկ ըլլալ հոս ու հանդերձեալին մէջ , մեղքը ձգելու ու կանչելու է Յիսուս Քրիստոսի , որ մեռաւ մեղաւորներն խրկելու , այս խօսակ-

յութիւնը Աստուծոյ օրհնութեամբը՝
անթշուառ կնոջը դարձին միջոց եղաւ :


Աւազ, անզեղջ մեղաւորներուդ,
աւազ, որ տակաւին խաւարի և մը-
թութեան մէջ էք. գերեզմանին մէջ
միշտ պիտի չըննջէք, քիչ ատենէն հը-
րեշտակապետը իր փողը պիտի հնչե-
ցնէ, և երկրիս չորս կողմէն պիտի լը-
սեն անոր ահոելի գոչումը ՚ի դատաս-
տան. և երբ կ'ելենք գերեզմանէն
յաւիտենական դատաւորին առջին պի-
տի ներկայանամք որոցմէ ոմանք Քը-
րիստոսի ձախ կողմը կայնած են լսելու
այն ահեղ վճիռը թէ՝ « գացէք ինձմէ
անիծեալներ յաւիտենական կրակին
մէջ որ պատրաստուած է սատանային
և իր հրեշտակներուն » : Այս միջոցին
եթէ կարելի ըլլայ տեսնել դժոխայ-
նոց վիճակը այս մարմնով, մարդուս
սիրար և թռքերը կտոր կտոր կըլլան.
ուրեմն վայ անոր որ անզեղջ կը
մեռնի :




Միթէ Յիսո՞ւս լոկ խաչն տանի,
եւ մարդս ազա՞տ ըլլայ .
Ոչ, խաչ մը կայ ամէն մէկուն,
ինձի ալ խաչ մը կայ :

Ինչ երջանիկ վերի սուրբերն,
Որք հոս կը տրտմէին .
Բայց հոն անխառն սէր կը վայլեն,
Ցնծումն ալ լիովին :

Օրհնեալ է խաչս պիտի տանիմ,
Մինչեւ օր մահն ինձ դայ .
Ու վեր ելլեմ պսակս առնեմ,
ինձի պսակ մը կայ :







4887

2013



45726